

Յարութիւն Արքեպիսկոպոս կը յիշուի ղենետիկի մէջ 1716ին (Հ. Ալիշան, Հայ-Ղենետ, էջ 343): Նոյնպէս Կ. Պոլսոյ հալածանքներէն փախած եւ ղենետիկի մէջ հասաատուած Պոլսեցի կաթողիկէ Հայերու հետ 1718ին վկայական մը գրած է Մխիթար Արքահօր եւ Միաբանութեանը կաթողիկէութեան մասին. «Մեք ստորագրեցեալք Կ. Պոլսեցիք, կ'ըսուի այնտեղ, որք այժմ գտանիմք ի ղէնէտիկ... վասն Մխիթարայ Աբբային զայս գիտեմք, զի սա ի մանկութենէ իւրմէ գոլով հետեւեալ ուսման գրոց եւ կրօնաւորականի կացութեան, ի մէջ Հայոց մինչ տակաւին քսան ամաց էր զանուն գիտնոյ ունէր, եւ քարոզէր զուղղափառ հաւատն ուր եւ հասանէր, եւ մեք աչօք մերովք տեսաք, զի ի Ղալաթիա ի նոյնում հասակի ի մէջ հազարաւոր ժողովուրդեան ի յատենի եկեղեցւոյն քարոզ ասէր, առ որ հիանային ամենեքեան որք լսէին... եւ թաղումք լուսաւորեցան ուղղափառ հաւատով... եւ հերետիկոսք զՄխիթար Աբբայն եւ զհետեւողս նորին վասն ուղղափառութեան միայն հալածեցին... զի ի յայնքանս անծանօթ տեղիս տարածեաց զուղղափառ հաւատն եւ ծաղկեցոյց, եւ զթաղումս հազարաւորս անձինս եմոյծ ի ծոց սուրբ եկեղեցւոյ... Արդ զոր գիտեաք ճշմարիտն վկայեցաք, եւ ձեռամբ մերով ստորագրեալ հաստատեմք, եւ ենթ դատաստանի եւ իրաւանց մօրս մերոյ Սրբոյ Եկեղեցւոյն Հռօմայ ստորագնեմք: Թվին Գի. 1718 Մայիսի 6 ի ղէնէտիկ: — Ես